№ 50 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՑԻՍԻ 4 1889 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՑԻՍԻ 4 № 50

ՏԱՍՆ ԵՒ ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։ Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ». կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են Իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Դատարկ տեղ հայ գրականութեան մէջ.Երևանի քաղաքագլխի ընտրութիւնը. Նամակ Երևանից. Նամակ Մեծ-Ղարաքլիսայից. Նամակ Շուշուց. Նամակ Նուխուց. Նամակ Երևանից. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ֆրանսիական հոգևորականութիւնը. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՕՐՍԱ. — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴԱՏԱՐԿ ՏԵՂ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Ռուսաց գրականական մի հսկայի—Սալտիկով-Շչեդրինի մահը, որ անփարատելի վիշտ է պատճառել այն միլիոնաւոր մարդկանց, որոնք հանճարեղ երգիծաբանի դրօշակի տակ երեսուն տարուց ի վեր ոգևորվում են նրա քարոզած իդէալներով, և նրա պաշտպանած գաղափարներով, բացի այն խորին ցաւակցութիւնից, որին մասնակից է հայ երիտասարդութեան լաւագոյն մասը, ծնեցնում է այս բօպէիս մեր մէջ և մի ուրիշ միտք, որը ծածկել անկարող ենք։ Այո, անկարող ենք ծածկել, որովհետև դա մի դատարկութիւն է ամբողջ հայ գրականութեան մէջ, որը վերջ ի վերջոյ պէտք է լցնել, քանի որ այդ դատարկութիւնը մի անջնջելի արատ է բերում ամբողջ հայոց գրականութեան։

Մեր խօսքը վերաբերում է այն բանին, որ մինչև այժմ էլ մեր գրականութիւնը զուրկ է մընացել ռուս գրողների ստեղծագործութիւնից, որ հայոց գրականութիւնը շատ քիչ է օգտվում ռուս գրականութեան մէջ յայտնված մտքերից, և պաշտպանած գաղափարներից, և վերջապէս, որ մեր թարգմանական գրականութիւնը համարեա թէ ոչինչ չունի ռուսաց գրողների գրչի արտադրութիւններից։

Իսկ դա մի շատ մեծ պակասութիւն է։ Եւ ահա թէ ինչու։

Ռուս գրականութեան մէջ, մանաւանդ վերջին տասնամեակի թեւականներին, և թէ նրանից յետոյ, արծարծվել են այնպիսի խնդիրներ, յարուցվել են այնպիսի մտքեր, որոնց հետ ծանօթանալը և որոնց հասկանալը կենսական մի կարիք է մեր կեանքի համար։ Մեր և ռուսաց կեանքի մէջ շատ ընդհանուր հարցեր կան, և մեր մամուլը, երիտասարդութիւնը և ինտելիգենցիան բարոյական ոչ մի իրաւունք չունէին և չունեն իրանց աչքերը փակելու և չը տեսնելու թէ ինչպէս են մշակվում ռուսաց գրականութեան մէջ այդ մեզ համար էլ ընդհանուր հարցերը։

Քառասուն տարի է արդէն, թէ ռուսաց պարբերական մամուլի լաւագոյն մասի մէջ, և թէ ռուսաց գրողների գրչով պարզաբանվում են տնտեսական, քաղաքական, վարչական և կրթական այնպիսի խնդիրներ, որոնք դեռ այսօր էլ մեզ համար չեն պարզված, և մութ են։ Եւ չը ծանօթանալով ռուս գրականութեան հետ, չը օգտվելով նրա ղեկավարների ունեցած գաղափարներից և ձգտումներից, մենք անուղղակի կերպով արգելք ենք դնում այն հարցերի վճռվելուն, որոնք այսօր,—ինչպէս մեզանում թուրթակի պէս կրկնում են ամենքն էլ,—մեզ համար կեանքի և մահու խնդիր են։

Մենք չենք էլ խօսում այն մասին, որ ռուսաց ամսագրական գրականութիւնը, որի մէջ վերջին տասնամեակի թեւականներից սկսած ամփոփված են ռուս մտքի շատ թանգագին արտադրութիւնները, կարող է հարուստ նիւթ տալ մեր գրականութեանը, եթէ թարգմանվէր, բայց չենք կարող լռել և մատնանիշ չանել այն իրողութեան վրա, որ մեր ընթերցող հասարակութիւնը անծանօթ է նոյն իսկ այնպիսի ռուս գրողներին, ինչպէս են Թէլինսկի, Դոբրոլիւբով, Նեկրասով, Զերնիշեվսկի, Ռոսպենսկի, Պիսարեվ, Միխայլովսկի, Տուրգենեվ, Շչեդրին, և այն բոլոր միւս գրողներին, որոնք պատկանում են ռուսաց գրականութեան այն չկոլային, որի ներկայացուցիչներ են համարվում այդ մարդիկ։

Մեռնում է դիցուք Տուրգենեվ կամ Շչեդրին, և ահա հայ երիտասարդութեան և հայոց ինտելիգենցիայի առաջադէմ կուսակցութիւնը մեր մամուլի առաջադէմ մասի հետ միասին անկեղծ վիշտ է արտայայտում այդպիսի կորուստների համար, բայց ընթերցող հասարակութիւնը միանգամայն անընդունակ և անկարող է լինում հասկանալու, թէ ինչի մէջ է այն կորուստը և թէ որքան մեծ է այդ վիշտը, որովհետև նա անծանօթ է այն իդէալներին և գաղափարներին, որոնց ծառայել են այդ մարդիկ, և որոնց համար նրանք իրանց կեանքը մաշել են։

Մենք դեռ ասելի կասենք. ռուսաց գրականութեան այդ տեսակ ներկայացուցիչների գրուածքները անծանօթ են ոչ թէ միայն մեր ընթերցող հասարակութեան հասարակ մասին, այլ նոյն իսկ մեր վարժապետներից շատերին, մեր գաւառական երիտասարդութեան մեծամասնութեանը, մեր վարժուհիներին, մի խօսքով նրանց, որոնք մեր հասարակութեան մէջ իբր թէ զարգացած դասակարգին պատկանողներն են համարվում...

Եւ դրա պատճառը այն է, որ հայերէն լեզուով ոչ ոք չէ կարող ձեռք բերել ոչ Տուրգենեվի, ոչ Շչեդրինի, ոչ Բէլինսկու, ոչ Միխայլովսկու, ոչ Գոգոլի, և ոչ Նեկրասովի գրուածքները, որովհետև ռուսաց գրականութիւնը մինչև այժմ էլ մեր հասարակութեան համար մի «անյայտ աշխարհ» է։

Իսկ դրա փոխարէն մեր թարգմանական գրականութիւնը Կ. Պոլսում անընդվում է ֆրանսիական գրականութեան ճաշակ փչացնող տակնքներով, իսկ ռուսահայերի մէջ այնպիսի գրուածքներով, որոնց թարգմանիչները դեռ շատ յետ են մնացել մեր ժողովրդի այժմեայն պէտքերը հասկանալուց...

Իսկ այդ բոլորի հետեանքը այն է, որ մեր գրականութիւնը շարունակում է դատարկ մնալ, չընդունելով իր մէջ դրսից կազդուրող, կեանք տըւող և սառած մտքերը փոքր ինչ թարմացնող հոսանք։

Մենք ի հարկէ ժամավաճառութիւն ենք հարում կանգ առնել մեր գրականութեան և մամուլի մէջ դեր խաղացող այն շրջանի մասին, որը նախամտածած դիտաւորութեամբ միշտ դիմադրել է այդ տեսակ «թարմացնող հոսանքի» առաջ գալուն, և վերջացնում ենք մեր խօսքը, յոյս յայտնելով, որ թէ մեր երիտասարդ թարգմանիչները, և թէ մանաւանդ մեր ամսագիրները և նոյն իսկ «Հրատարակչական ընկերութիւնը» կաշխատեն գէթ սրանից յետոյ հայ գրականութեան մատակարարելու ռուսաց գրականութեան մէջ պարունակված գանձերը։—Իսկ դա կը լինի մի բաւական մեծ ծառայութիւն։

Խ. Մ.

ԵՐԵՒԱՆԻ ՔԱՂԱՔԱԳԼԽԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

«Մշակի» 47 համարում հաղորդած լուրերից երևում է, որ Երևանում մայիսի 21-ին և յաջորդ օրերում նշանակված է քաղաքի դումայի ձայնաւորների ընտրութիւնը, իսկ յունիսի 4-ին քաղաքագլխի ընտրութիւնը։ Ցայտնի է արդէն, որ իբրև քաղաքագլխի թեկնածուներ համարվում են՝ պ. Աֆանասեան, որը արդէն տեղափոխվել է Գանձակ, Քութայիսի նահանգական դատարանի նախկին նախագահ պ. Ղայթմազով, ծառայութիւնից հրաժարված գեներալ Շահխաթունով և Երևանի այժմեան քաղաքագլուխ պ. Գեղամեան։ Այդ անձինքներից ամենացանկալին է երևանցիների համար պ. Աֆանասեան, բայց մեզ յայտնի է, որ նա դրականապէս հրաժարվում է այդ պաշտօնը ստանձնելուց, ուրեմն մնում են վերջին երեք անձնաւորութիւնները, որոնցից պ. Կայթմազով անծանօթ է ժողովրդին, իսկ պ. Շահխաթունով այն թեկնածուներից է, որին համակրում է մի նեղ շրջան։ Իսկ ինչ վերաբերում է պ. Գեղամեանին, յայտնի է արդէն թէ «Մշակից» և թէ առհասարակ մեր տեղական մամուլից, որ նա իբրև քաղաքի գործերի ղեկավար՝ կատարելապէս անընդունակ անձնաւորութիւն հանդիսացաւ։ Եւ պ. Գեղամեան վաղուց է արդէն որ Երևանի ազգաբնակութեան մեծամասնութեան մէջ կորցրել է իր երբեմն ունեցած ժողովրդականութեան վերջին մնացորդն էլ։ Ուրեմն նրա կողմից մի մեծ յանդգնութիւն, մի կատարեալ անխոհեմութիւն կը լինէր՝ նորից քուէարկվելու իբրև քաղաքագլխի թեկնածու։

Այդպէս ուրեմն այդ չորս թեկնածուներից՝ մէկը չէ ցանկանում, իսկ մնացեալ երեքը անյարմար են։ Ահա մի ամբողջ տարի է, որ երևանցիք չէին կարողանում դրականապէս մատնացոյց անել մի որոշ անձնաւորութեան վրա, որին կարելի լինէր ընտրել քաղաքագլուխ. իսկ այժմ, երբ քաղաքագլխի ընտրութեան ժամանակը վճռված է, երեւանցիք գտել են իբրև քաղաքագլխի թեկնածու մի վերին աստիճանի համակրելի անձնաւորութիւն,—դա Շարուր-Դարալագեազ գաւառի հաշտարար դատաւոր, պ. Հայկ Տէր-Ամբակումեանցն է, որը իր ուսումը աւարտել է Մոսկվայի Լազարեան ճեմարանում և ահա ամբողջ տասըն տարի վերոյիշեալ գաւառում հաշտարար դատաւորի պաշտօն է կատարում։ Պ. Տէր-Ամբակումեանց իբրև դատաւոր և իբրև մարդ արժանացել է ոչ թէ միայն նահանգական դատարանի և իրան փոքր ի շատէ ճանաչող անձանց, այլ և ամբողջ Շարուր-Դարալագեազ գաւառի բոլոր ազգերի և ցեղերի ամենաջերմ սիրոյ և համակրանքի. նա վերին աստիճանի ընդունակ անձնաւորութիւններից է, նա հաղագիւտ ազնիւ մարդ է, նա ամենահմուտ, անաչառ, ճշմարիտ և արդար դատաւորներից մէկն է համարվում ամբողջ Երևանեան նահանգում, և գուցէ ամենալաւ դատաւորներից մէկն է և ամբողջ Կովկասում։ Ահա այդ է պատճառը, որ նրան սիրում և պաշտում են՝ հայը, թուրքը և քուրդը, քաղաքացին և գիւղացին, մեծը և փոքրը. նրան յարգում է ամբողջ նահանգի ինտելիգենցիան, յարգում են և ժողովրդի բոլոր դասակարգերը։ Այդպիսի մի անձնաւորութիւն արդարև արժանի է ժողովրդի ղեկավար լինել, արժանի՞ է միաձայն ընտրութեան։ Մենք համոզված ենք, որ նա կարող է լինել ամենաօգտաւէտ գործիչ, թէև չենք կարող չը խոստովանվել, որ Երևան քաղաքի գործերի այժմեան վիճակը անասելի կերպով խըճճված է, քաղաքի տնտեսական մասը վաղուց կարօտ է բարւոքման, ձայնաւորների իրաւունքները կաչկանդված են և ոտնակոխ են արած։ Այդ բոլորի համար հարկաւոր է մի տոկուն, հասկացող և ազնիւ անձնաւորութիւն, որպէս զի կարողանայ ազատել քաղաքը միաստակար մարդկանց ազդեցութիւնից և դէմն առնել այն անհաշիւ զեղծումներին, որոնք տեղի են ունեցել քաղաքի գործերում այս վերջին չորս, հինգ տարվայ ընթացքում, և որոնք կատարվում են և այժմ ամեն օր և ամեն քայլում։ Պ. Տէր-Ամբակումեանց ինքն երևանցի լինելով, քաջ ծանօթ է թէ քաղաքի գործերի և թէ քաղաքացիների պահանջների հետ։ Նա ազնիւ, արդար և խելացի անձնաւորութիւն է, իսկ այդ յատկութիւնները մի մեծ գրաւական են որ նա անաչառ և հմուտ քաղաքագլուխ կարող է լինել։

***

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Մայիսի 1-ին

Երևանը վերջին ժամանակներում սովորականից դուրս կենդանութիւն է ստացել։ Ամենայն օր նորանոր եկողներ, գնացողներ։ Ապրիլի 25-ին, առաւօտեան ժամի մօտ 12-ին Երևան մտաւ Մակար Վ. Կաթողիկոսը։ Վեհափառին քաղաքի սահմանագծի վրա դիմաւորելու էին գնացել՝ Սուքիաս եպիսկոպոսը, թեմական դպրանոցի տեսուչը, ուսուցիչները, քաղաքագլուխը, քաղաքային վարչութեան անդամները, իրաւասուներից և քաղաքացիներից շատերը, քաղաքապետը, գաւառապետն իր ձիաւորներով և մի վաշտ կազակներով։ Պ. քաղաքագլուխը աղ ու հաց մատուցեց. ապա մտեցան Վեհափառ հոր աջը համբուրելու։ Այնուհետև հանդիսաւոր գնացքը շարունակվեց դէպի քաղաք։ Ներկայ էր մեծ բազմութիւն։ Ս. Սարգիս եկեղեցու դրանը սպասում էր հոգևորական դասը, որ և պատշաճաւոր կերպով հայրապետին առաջնորդեց դէպի եկեղեցին։ Եկեղեցու հիւսիսային դռնից մինչև առաջնորդարանը երկու կարգ կանգնած էին քաղաքիս երկու սեռի հայ դպրոցների աշակերտները և աշակերտուհիներն իրանց ուսուցիչներով. սրանց թըւում և տեղիս պարսիկ աշակերտներ իրանց միրզաներով։ Վեհափառի անցնելու ժամանակ պարսիկ աշակերտները միասին երգ էին երգում։

Երեկոյեան հրաւառութիւն կար ս. Սարգիս եկեղեցու բակում. դպրանոցի աշակերտները երգում էին ազգային երգեր. Վեհափառն ամեն օր ընդունում է իր աջահամբոյր գնացողներին—մի օր ուսուցիչներին, մի այլ անգամ երեցփոխնեներին, բարեգործական ընկերութեան վարչութեան անդամներին, հոգաբարձուներին, քահանաներին, և ժողովրդին։

Քաղաքս այսօր ժամի 4-ից մինչև 5-ը սպասում է ընդունելու պարսից Նասրէդին շահին։ Դեռ երէկվանից դրօշակներով զարդարված է (երէկ դրօշահանդէս էր)։ Դրօշակների մէջ աչքի են ընկնում սպիտակ գոյները կանաչով շրջանակված—դա պարսկական դրօշակն է։ Գանօթներից մինը լաւ բացատրեց՝ կանաչազարդ սպիտակը նշան է՝ ըստ մարգարէ Մահամէդի՝ մշտադալար մաքրութեան—անարատութեան։ Փողոցները քանի օր է ջրվում ու աւելվում են։ Նահանգապետի տան առջև ձգվող փողոցի վրա կառուցված է մի հաստասիւն յաղթական կամար պարսկական արքայադրօշ՝ առիւծ ձեռքին մերկ սուր՝ նշանով գագաթում աջ ու ձախ զարդարված ռուսական ու պարսկական դրօշակներով։ Կամարի վրա երկու կողմից պարսկերէն տառերով գրված է՝ «Երևան քաղաքը ողջունում նորին մեծութեան պարսից շահին»։ Կամարից դէպի հարաւ կանգնելու են քաղաքիս բոլոր հայ, ռուս, պարսիկ դպրոցների աշակերտ և աշակերտուհիները իրանց ուսուցիչներով ու վարժուհիներով. աշակերտների ետեից տեղական բատալիոնը. կամարից դէպի հիւսիս—նահանգապետի տան առաջ—նորակոչ զինուորները—իբրև պատուաւոր պահնակ, որոնց դիմացը զինուորական ու քաղաքացիական պաշտօնեաները։ Կամարի տակ շահին դիմաւորելու է աղ ու հացով քաղաքագլուխը ձայնաւորներով միասին։ Այդին, փողոցները զարդարված-լուսաւորված պիտի լինեն. լինելու է հրախաղութիւն։

Երէկ հեռագիր ստացվեց, որ նորին մեծութիւն Նասրէդին շահը բարեհաճել է առանձին յատուկ տեսակցութեան ժամ որոշել Կաթողիկոսին ընդունելու համար։ Հրաւառութիւն պիտի լինի և առաջնորդարանի բակում։ Այսօրվայ համար յատկապէս պատուիրած է երկու մեծադիր ցուցանկար (վէնզիլ), մինը մեծ առիւծ, թաթին բռնած մերկացրած սուրը պարսկական թագաւորական թագով, կանաչ պսակի մէջ ամփոփված—միւսը մի մեծ խաչ հայրապետական ու հովուական գաւազաններով և թագով զարդարված, նոյնպէս կանաչ պսակի մէջ։ Երկուսն էլ նկարել է թեմական դպրանոցի նկարչութեան ուսուցիչ պ. Մ. Տէր-Սարգսեանց։ Գայեանեան դպր. վարժուհի տիկին Ա. Տէր-Սարգսեան ձեռագործել է մի գորգ պարսկական պետական նշանագրօշով, որ մտադիր է ընծայելու պարսից շահին։

Նորին մեծութիւն պարսից Նասրէդին շահի

հետ եկող բարձրաստիճան հիւրերի համար որոշված են մասնաւոր տներում դիշերելու տեղեր։ Շահի հետ եկող բարձր հիւրերի թւում գտնվում է և հայազգի Զահնգիր-խանը, որ դեղեցիկ արուեստների մինիստր է (МИНИСТРЪ ИЗЯЩНЫХЪ ИСКУСТВЪ)։

Ցեղիս նշանաւոր պարսիկներից 2 հոգի իրանց ձիաւորներով (50-ական հոգի) պատրաստվելու են եղել ընդառաջելու պարսից շահին։

Հ. Ա.

ՆԱՄԱԿ ՄԵԾ-ՂԱՐԱԲԼԻՍԱՑԻՑ

Ապրիլի 25-ին

Հաղիւ թէ երբ և իցէ ներկայ թշուառութեան հասած լինի մեր ժողովուրդը. բազմաթիւ ընտանիքներ հաց չունեն ուտելու, չունեն և ցանելու. վար ու ցանքի պէտքական եղներ, գոմէշներ նոյնպէս չունեն. ապրուստի ամեն միջոցից զուրկ՝ երկնքից մանանային են սպասում. ոչ գործելու ասպարէզ ունեն, ոչ մուրալու ամրապինդ երես։ Մի քանի շահի-բիսոի ժողովեցինք՝ այն էլ խեղճերի գլխին հարամ արինք.... մի մասն էլ դեռ տանուտէրի գրպանումն է բանտարկված.... Գարունը բացվեց, ասում են, թող եօլա գնան,—կարծես—իսոտ պէտք է արածեն։ Մեր հարուստների սիրտն էլ ապառաժ է կտրել. ոչ հասարակական ընկած գործերը, ոչ սովատանջ հարևանը նրանց չեն հետաքրքրում, գութը չեն շարժում։ Գոնէ թոյլ տրվէր ժողովրդին անտառից փայտ վաճառահանելու, որ ներկայումս ապրուստի միակ միջոց կարելի է համարել. բայց այդտեղ էլ արգելքներ անպակաս են. ժամերով, օրերով ստիպված ես անտառապետի դրանը կուչ ու ձիգ անել, աղաչել, պաղատել մինչև որ տոմսակ կը ստանաս կամ ընդհակառակ և քիչ չէ պատահել, որ չիրակեցիք դատարկաձեռն են վերադարձել չաբաթներով քաշ գալուց յետոյ։

Մեր շինական կառավարութիւնն էլ վրացու ջարդված ակայի է նմանում. անընդունակ տանուտէրի շնորհով անիշխանութիւնը կատարեալ է. «ուտող ուտողի, քանդող քանդողի է»։ Հասարակական գումարների պարզ հաշիւ, բարեխիղճ համարատուութիւն երբէք գոյութիւն չէ ունեցել մեզանում. բայց ներկայումս անբարեխղճութիւնը, կարելի է ասել, իր գագաթնակէտին է հասել. ինչ ստացվում է, հաշիւ չը կայ. ինչ ծախսվում է աւելորդութիւններով, խայտաճամուկ պոչերով հրապարակի վրա է. աննպատակ, մտացածին ծախսեր հետզհետէ բարդվում են ժողովրդի թոյլ ուսերի վրա և չը կայ մէկը որ հարստահարված, ուժասպառ ժողովրդի իրաւունքները պաշտպանէր։

Գոնէ մի փոքր կառավարչական տաղանդ ցոյց տար մեր յարգելի տանուտէրը, հոդար ներքին բարեկարգութիւնների մասին. խառնութիւններ, կատաղի տուր ու դմփոցներ, մեծ ու փոքր աւազակութիւններ աւելի և աւելի ընդարձակութիւն են ստանում։ Գետեզրներում չարան-չարան դիզված են թրիքի կոյտեր, որոնց թունալից մասնիկները առատապէս լուծվում են մեր իմած ջրի մէջ։ Մեր փողոցները սեղմում են ամեն կողմից, չհայլութիւն է լայն փողոցներ ունենալ. աղբ, թրիք, ամենայն անմաքրութիւն փողոցների կէս տեղումն են, ինչու թմրած ժողովրդի հանդստութիւնը վրդովել։ Մեր լապտերները կամ չեն վառվում կամ վառվում են շատ վատ. ինչու կապալառուի քէֆին դիպչել, աղքատ մարդ է, թող եօլա գնայ։ Լեշեր, դիակներ ընկած են այս ու այն փողոցում. թող զուարճանան անուշահոտ բուրմունքով. ինչու ժողովրդին զրկել այդ բաւականութիւնից։ Ինչ վնաս եթէ ծաղիկը և այլ վարակիչ հիւանդութիւններ մեզ մօտ հիւր կը գան մեր գարշ աղտեղութեան շնորհով։ Արդէն կարճ միջոցում 60 անմեղ մանուկներ ճանապարհ դրինք այն աշխարհ. երեի դեռ շատերին կը զոհենք մեր տգիտութեան և նախապաշարմունքներին։ Ինչ տեսակ կուզես համոզիր ժողովրդին մաքրութեան և ծաղկի պատուաստման օգտակարութեան մասին, դարձեալ ոչինչ չես կարող շինել, եթէ գիւղական վարչութիւնը թոյլ է և անընդունակ խօսք հասկանալու։ Եթէ իշխանութիւնը իր իսկական դերում չէ, ամեն քարոզ, ամեն օգտաւէտ առաջարկութիւն ապարդիւն կանցնեն։ Այո, մեր տանուտէրը կատարեալ իրաւունք ունի խրոխտալով պարծենալ, որ Ղարաքլիսի ոսկէդարը իրանով սկսվել, իրանով էլ պէտք է վերջանայ։ (Այդ ինքնահաւան պարոնը այսպէս է մտածում)։

Շտեմարանի հաշիւն էլ կարելի է ասել գոլորշիացաւ. շտեմարանապետը հարկաւոր համարեց մի 600 ր. շպրտել առանց որ և է համարատուութեան, իսկ բարեջան տանուտէրը խոհեմութիւն համարեց սուս ու փուս վերցնել և հաշիւը վերջացած համարել. այնուհետև ինչ պատահեց ժողովրդի այդ ողորմելի կօպէկների հետ, Աստուծը միայն գիտէ....

Ոչ պակաս ազնիւ վարվեց և մեր նախկին տանուտէրը, որի մասին ամբոխը դեռ չարունակում է լաւ գաղափար ունենալ. այդ պարոնը շտեմարանի գարին պուդը 40 կօպէկով ծախեց, բայց շռայլութիւն համարեց այդ գնով հաշվել. գինը իջեցրեց մինչև 25 կօպէկի. այդ էլ հարկաւոր համարեց երկար, շատ երկար պահել իր դրպանում, ապա թէ բարեհաճեց վերջապէս լուր տարածել, որպէս թէ հասարակութեան անունով բանկն է դրել. տոմսակներն էլ նոյն իսկ բանկին է պահ տուել, որովհետև հասարակական արկղում տեղ չը կայ.... Ներկայ տանուտէրը իր թագաւորութեան սկզբի օրերում փոթորիկ բարձրացրեց նախկին տանուտէրից հաշիւ պահանջելու, բայց երբ ինքն էլ նոյն տիղմի մէջ թաղվեց առաւել խոր, փոթորիկը իսկոյն դադարեց և խորին լռութիւն տիրեց։

Այսպէս բարեխիղճ և պարտաճանաչ են մեր գործիչները, որոնք խորամանկութեամբ կոյր ամբոխի ինստինկտները շողոքորթելով, իշխանութիւն են ձեռք բերում և միանգամայն իրանց անձնական փառքին և սեփական շահերին ծառայեցնում. այլ կերպ չէր կարող գոյութիւն ունենալ 1,000 ր. հասարակական պարտք, որ շատ զգալի է այն ժողովրդի համար, որի 3/4 մասը այսօր օրվայ հացի կարօտ է, որի պատճառով արքունական հարկի վճարումն էր յետաձգված է։

Այսպէս հրաշալի դրութեան մէջ են մեր հասարակական և միւս գործերը, որոնց մասին հաշիւ կը տանք ընթերցողներին մի այլ անգամ։

Ղարաքլիսեցի

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Ապրիլի 30-ին

Գիւղացիները յուսահատ դրութեան մէջ են գտնվում։ Մինչև այժմս ամենևին անձրև չէ եկել, երաշտ է։ Ինչպէս ասում են, եթէ երկու չաբաթ էլ այսպէս լինի, արտերը բոլորովին կը փչանան։ Իսկ այն ժամանակ կարելի է հեշտ երևակայել գիւղացու դրութիւնը. վերջին երկու տարին նա ոչինչ չէ ստացել իր վար ու ցանքից, և եթէ այս տարի էլ ոչինչ չը ստանայ, այն ժամանակ ինչ պիտի անէ թշուառ գիւղացին.... Դիմէ հարուստ գիւղացիներին. ոհ, այն ժամանակ նրան կորած համարիր. հարուստ գիւղացին անխիղճ կերպով ծծում, կեղեքում է նրան.... Սակայն այսքանը կարծես բաւական չէ. մորեխ է երևացել սոսկալի կերպով. կառավարութիւնը ամեն ջանք գործ է դնում ոչնչացնելու մորեխը։ Թշուառ գիւղացի. եղած-չեղածդ յանձնում ես գետնին, որ՝ վիզդ ծռած՝ մնաս կանգնած....

Մինչև այսօր մեր երկսեռ դպրոցների համար հոգաբարձուներ դեռ ևս չեն ընտրվել, չը նայելով որ սրբազանը հրաւիրել է հոգաբարձուներ ընտրել։ Ինչպէս արդէն յայտնել եմ «Մշակում», վեհափառ Կաթողիկոսի Կոնդակի համեմատ՝ հոգաբարձուներից երեքը աշխարհական, իսկ երեքը հոգևորական (այսինքն քահանայ) պէտք է լինեն։ Բայց ժողովուրդը չէ կամենում քահանայ հոգաբարձու ընտրել, ինչ-ինչ պատճառներ աչքի առաջ ունենալով։ Թէ ինչով կը վերջանայ դա, այդ մօտիկ ապագան ցոյց կը տայ. միայն իրողութիւնը սա է, որ մէջտեղ ուսումնարանն է վնասվում.... Չը մոռանանք ասելու, որ մի քանի մարդիկ, որոնք մինչև այժմս ուսումնարաններով ամենևին չեն հետաքրքրվել, այժմս, երբ հոգաբարձուներ ընտրելու խնդիր կայ, ասպարէզ են դուրս եկել, թէ ինչու համար,—դա պարզ է....

Վերջին ժամանակներս Շուշիում յաճախ են պատահում սպանութիւններ. օրինակ՝ անցեալ օրերը երեկոյեան, մօտաւորապէս 8 ժամին, մի քանի սրիկաներ ատրճանակով սպանեցին մէյդանի գիշերային պահապաններից մէկին։ Սպանութեան պատճառը թշնամութիւնն է եղել։ Սպանողներից մէկն է միայն բանտարկված։

Ամսիս 29/30 գիշերը տեղիս բանտից 20 բանտարկվածներ փորձել են փախչելու. պահապանները իմանալով այդ, 4-ին գնդակահար են արել, երկուսին վիրաւորել, իսկ մնացածներին աջողվել է փախչել. դրանք դեռ ևս չեն գտնված։

***

ՆԱՄԱԿ ՆՈՒԽՈՒՑ

Ապրիլի 25-ին

Կիրակի, ապրիլի 23-ին, սիրողների խումբը հայոց օրիորդական դպրոցի դահլիճում բարեգործական նպատակով խաղաց «Պէպօ» և «Վոյ քի իմ վեչեր», մասնակցութեամբ տիկին Լիւդմիլա Տէր-Պողոսեանցի և տիկին Ս. Խօջամիրեանցի։ Ներկայացումը անցաւ բաւական յաջող, և զուտ արդիւնք դոյացաւ մօտ 120 ռուբլի։

Ներկայացումներ այսպիսի գաւառական քաղաքներում շատ դժուարութեամբ են գլուխ բերվում, որովհետև տեղացի կանայք, որքան էլ նրանց մէջ ընդունակները լինէին, չեն համաձայնվում խաղալու տգէտ հասարակութեան բամբասանքից վախենալով։ Այս դէպքում ամենայն շնորհակալութեան արժանի են տիկնայք Տէր-Պողոսեան և Խօջամիրեանց, որոնք ոչ թէ միայն մասնակցել են ներկայացման, այլ և նոյն իսկ այդ ներկայացման ինիցիատորներ դառան։ Թատրոն եկող հասարակութիւնը բուռն ծափահարութեամբ վարձատրեց յարգելի տիկինների չափից դուրս յաջող խաղը և դուրս եկաւ թատրոնից ամենալաւ տպաւորութեան տակ։

Մի քանի օր առաջ երեկոյեան ժամի 9-ի մօտերը թուրքերի մզկիթում մի պարսիկ գնդակահար է եղել։ Հրացանը արձակել են մզկիթի պատուհանով դրսից։ Զարագործը չէ բռնված։

Մօտիկ Ղէյլաղ գիւղում անյայտ մարդիկ մաշկել են մի կենդանի գոմէշին՝ նրա կաշին գողանալու համար։ Գոմէշը՝ կենդանի է, և նրա տէրը չէ ուզում, որպէս պատմում են, մորթել նրան, ցանկանալով որ բոլորն էլ տեսնեն թէ որքան անխիղճ մարդիկ կան աշխարհում, և որքան բարբարոսաբար նրանք վերաբերվել գիտեն դէպի անլեզու անասունները։

Աբ. Ապ.

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Ապրիլի 24-ին

Ուղիղ մի տարի առաջ, նոյն այս ժամանակ մենք մի թղթակցութեամբ (տես «Մշակի» № 53) յայտնեցինք, որ Երևանի վեց եկեղեցիներում Զատիկ կիրակի օրը միմիայն մօտ 1,000 ռուբլի ծախսելով մատաղների վրա, ոչ մի նպաստաւոր և հանրօգուտ գործ չեն կատարում, բացի այն, որ իւրաքանչիւր հայ մի բաժին մատաղ է ստանում, այն է մի կտոր հաց և մի քանի կտոր եփած միս. այն ինչ այդ մատաղների վրա ծախսվող գումարով երևանցիները կարող էին մի այնպիսի համեստ աղքատանոց հիմնել, որի մէջ ապաստան գտնելով թէ աղքատները և թէ չքաւորները, նախ որ բարեգործութիւն արած կը լինէին, շատ թշուառութիւնների վերջ տուած կը լինէին, և ժողովուրդը ազատված կը լինէր կոյր, կաղ, անդամահատ, հիւանդոտ և գզգզված զգեստներով աղքատ մուրացկանների տխուր պատկերներից, նրանց ազեկտուր ձայների զայրոյթից և ամօթ բերող հանդամանքներից, և երկրորդ՝ գլխաւորապէս երևանցիները իրանց յարգը և պատիւը վերականգնած կը լինէին։ Բայց որ ասես՝ ճան զարմացանք, երբ մեր մի այդպիսի թղթակցութիւնը հրատարակվելուց մի քանի օր յետոյ, գտնվեցան մարդիկ, որոնք զանազան թերթերում պաշտպան և աւանդապահ հանդիսանալով հայի դարևոր աւանդութիւններին, սովորութիւններին և սուրբ առաքելական եկեղեցու իրաւունքներին, աշխատում էին ապացուցանել «Մշակի» ուղղութեան վնասակարութիւնը և աղդաւնաս ընթացքը, ասելով որ «Մշակը» ուզում է հայ ժողովրդի աւանդութիւնները և սովորութիւնները քանդել, աւերել, լուսաւորչական եկեղեցու իրաւունքները խախտել, հիմքը փորել։ Պարոններ, միթէ դուք համոզված էք և այնքան զօրաւոր ոյժ էք զգում ձեր մէջ, որ «Մշակի» խախտած հայ ժողովրդի վատ սովորութիւններին և աւանդութիւններին պաշտպան հանդիսանաք, որ «Մշակի» քանդածը նորոգել կարողանաք։

Այդ ինքն ըստ ինքեան կլքոտ խօսքերին մենք չը պատասխանեցինք, այդ թողնելով հանդամանքների բերմունքին։

Եւ ահա այսօր Երևանում թէ ծախսարարները, թէ ժողովրդից շատերը և թէ նոյն իսկ սրբազան առաջնորդը, մատաղների վրա ծախսվող այդ նշանաւոր գումարը անտեղի գտնելով, կամ մի փոքր մասը միայն ծախսելով, իրանց ցանկութիւնն են յայտնում և մինչև անգամ տեղական բարեգործական ընկերութեան անդամներին յայտնում, որ այդ գումարը յատկացնեն բարեգործական ընկերութեան իրաւունքին, աղքատանոց կամ հիւանդանոց հիմնելու համար։ Մի տարի առաջ մեր յայտնած միտքը այսօր Երևանում յարուցվելով, հաւանութիւն գտնելով, բացի սրբազան առաջնորդից, նոյն իսկ ծախսարարների և ժողովրդի մէջ փոքր առ փոքր իրականութիւն ստանալով, մնում է մեզ միայն ասել. «Պարոններ, վեր առէք «Մշակի» 44 համարում Երևանից տպված լուրը և կարդալուց յետոյ համոզվեցէք, որ արդարութիւնը միշտ յաղթող է, որի հարուածների տակ միշտ նսեմանում են ամենայն կիրք և չարիք»։

Ե. Տ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, մայիսի 2-ին

Ընթերցող հասարակութեան համար արդէն բոլորովին պարզ է թէ «Արձագանքի» և իր արբանեակի դրութիւնը և թէ միւս կողմից իմ դրութիւնը։ Հակառակ իմ կազմած համոզմունքին, թէ «Արձագանքն» «իդէալ» չունի, ես այժմ համոզվում եմ, որ նրա իդէալն է գրական անբարոյականութիւնը։

Այդպիսի իդէալ ունեցող չաբաթաթերթը, իր արբանեակի բերանով «յետ լիղեց իր թքածը» և դեռ բոլորովին չը զգաստացած՝ ամենազզուելի կերպով տատանվում է, մեզ ուզում է կաշառել, ասելով թէ իր խօսքերը «Մշակի» յարգոյ խմբագրին են ուղղած։

Մենք չենք պարծենում նրանով, որ «Արձագանքը» յաղթված է և կրկնում է մեր այն խօսքերը, որ դեռ անցեալ օրերը մենք նրան դաս տուինք. չենք պարծենում, որովհետև ստախօսներին և ուրացողներին հաւատալու միամտութեան աստիճանից մի փոքր վեր ենք համարում մեզ։

Արդէն «Արձագանքը» իր վերջին պատասխանով ընդունեց մեր նրան ուղղած «ցածահոգի» և «երկչոտ» խօսքերը, այդ արդէն բաւական է նրան կատարեալ արհամարհանքի ենթարկելու համար։

Այժմ մեզ մնում է կրկնել այդ մարդկանց հասցէին նոյն խօսքերը, ինչ որ դեռ վաթսունական թւականներին ասում էր ռուսաց մի նշանաւոր գրող Դոբրոլիւբովի առիթով ռուսաց ինտելիգենցիայի մի որոշ տեսակի խմբին։

«Теперь, милостивые государи, называвшіе нашего друга человѣкомъ безъ души и сердца, —теперь честь имѣю обратиться къ вамъ, и отъ имени моего, отъ имени каждаго прочитавшаго эти страницы, въ томъ числѣ и отъ вашего собственнаго имени,—да, и вы сами повторяете себѣ то, что я говорю вамъ,—теперь имѣю честь назвать васъ тупоумными глупцами. Вызываю васъ явиться, дрянные пошляки,—поддерживайте же ваше прежнее мнѣніе, вызываю васъ.... Вы смущены? Вижу, вижу, какъ вы пятитесь.... Помните же, милые мои, что напечатать имена ваши въ моей волѣ и что съ трудомъ удерживаю я себя отъ этого»։ («Այժմ պարոններ, դուք, որ մեր բարեկամին անուանում էիք անսիրտ և անհոգի, այժմ պատիւ ունեմ դիմել ձեզ թէ իմ անունից և թէ այն բոլոր անձինքների կողմից, որոնք կարդացել են այս տողերը, և հէնց նոյն իսկ ձեր կողմից,—այո, դուք ինքներդ կրկնում էք ձեզ նոյնը, ինչ որ ես ասում եմ ձեզ,—այժմ պատիւ ունեմ անուանել ձեզ բթամիտ տխմարներ։ Հրաւիրում եմ ձեզ հրապարակ գալ կեղտոտ ստորաքարշներ. եկէք, պաշտպանեցէք ձեր առաջվան կարծիքները. հրաւիրում եմ ձեզ։ Դուք չփոթվածէք։ Տեսնում եմ, տեսնում եմ թէ ինչպէս էք յետ ընկրկում։ Ուրեմն հասկացէք, սիրելիք, որ ձեր անունները տպագրելը իմ կամքից է կախված և ես ինձ դժուարութեամբ եմ զսպում այդ անելուց»։

Ուրիշ ոչինչ։

Սիմէօն Հախումեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ, չորեքշաբթի օր, ժամը ուղիղ 5-ին, կէսօրից յետոյ, հասաւ Թիֆլիս պարսից Նասրէդին Շահը։ Գնացքի լոկոմոտիվը զարդարված էր դրօշակներով։ Իշխան կառավարչապետը անմիջապէս մտաւ շահի վագոնը, պարսից միապետին ողջունելու համար։ Կայարանի պլատֆորմի վրա կանգնած էին՝ զօրքը և ազնուականներից բաղկացած պատուաւոր պահնակը։ Անմիջապէս լսվեց

պարսից մարշը և պլատֆորմի վրա դիմաւորեցին շահին, իշխան կառավարչապետի հետ միասին, նահանգապետը, կոմենդանտը և բոլոր բարձրաստիճան անձինք։ Կայարանի դահլիճում դիմաւորեցին շահին աղ ու հացով՝ Թիֆլիսի քաղաքագլուխը, քաղաքային դումայի ձայնաւորներով, և մի պատգամաւորութիւն Թիֆլիսաբնակ սալմասեցի հայերի ու պարսիկների։ Թէ քաղաքի և թէ սալմասեցիների կողմից մատուցած աղ ու հացը դրված էին արծաթեայ ոսկեզօծ սկուտեղների վրա։ Քաղաքագլուխը արտասանեց հետեւեալ ճառը. «Թիֆլիս քաղաքը ողջունում է ձերդ մեծութեան բարի գալուստը։ Աղդաբնակութեան կողմից, որին դուք արժանացնում էք երրորդ անդամ ձերդ մեծութեան տեսնելու մեծ պատուին, համարձակվում եմ արտայայտել անկեղծ ցանկութիւն որ ձեր մեծութեան և ներկայ ճանապարհորդութիւնը ծառայէր իբրև գրական երկու հարեան պետութիւնների բարեկամութեան կապերը ամրապնդելու համար։» Շահը նորհակալութիւն յայտնեց և պատասխանեց որ ինքն ուրախ է թէ նորից Ռուսաստան է գալիս և եթէ Աստուած կը տայ, չորրորդ անդամ էլ կը գայ և վերջապէս ինքն սիրում է Ռուսաստանն ու Պարսկաստանը հաւասարապէս։ Կայարանից շահը իշխան կառավարչապետի հետ կառքը նստելով, և երկու շարք դրօշակակիր համքարների միջով անցնելով, մտաւ Միքայէլեան փողոցը, որի երկայնութեամբ կանգնած էին երկու կարգ զինուորներ։ Պալատի առաջ դիմաւորեց պատուաւոր պահակը։ Մուզիկան նուագեց պարսից մարշը։ Պալատում դիմաւորեցին բարձր աստիճանաւորները։ Ամբողջ քաղաքը դրօշակներով էր զարդարված, և փողոցներում խըռնված էր մեծ բազմութիւն իսկ տների բալկոններն ու պատուհանները լի էին հանդիսականներով։ Երեկոյեան քաղաքը լուսաւորված էր։

—

«Кавказъ» լրագրում կարդում ենք, որ Պետերբուրգից ստացված է տեղական ուսումնարանական վարչութեան անունով մի շրջաբերական, որով նորից թոյլ է տրվում կովկասեան բոլոր պետական դպրոցներում հայ-լուսաւորչական կրօնը առանդել հայոց լեզուով։

—

ԳՕՐԻՍԻՑ մեզ գրում են, որ ապրիլի 17-ին հայաբնակ Սևաքար գիւղի մի բնակիչ սպանված և նրա մարմինը սաստիկ այլանդակված է գտնվել մօտակայ անտառում։ Զարագործները փախել էին, իրանց զոհի մարմինը սաստիկ կերպով այլանդակելուց յետոյ։

—

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են, որ ապրիլի 22-ին գիշերվայ ժամը 11-ին, երբ թուրքերի մզկիթը լի էր աղօթողներով, լսվում է հրացանի արձակման ձայնը և մի թուրք, որը այդ ժամանակ աղօթելիս է եղել, տեղն ու տեղը սպանվում է հրացանից արձակված գնդակով։ Զարագործը անհետացել է։

—

ԹԻՖԼԻՍԻ ռուսաց այլ և այլ եկեղեցիներում կատարվել են հանգուցեալ Շչէդրինի յիշատակին հոգեհանգիստներ։

—

ԲԱԳՈՒՑ մեզ գրում են. «Մայիսի 7-ին, կիրակի օր, Բագում կը կատարվի հանգուցեալ Բաֆֆիի մահվան տարեդարձի առիթով հոգեհանգիստ, Ս. Լուսաւորիչ եկեղեցում։ Հանգուցեալի յիշատակի յարգողները հրաւիրվում են ներկայ լինելու 11 ժամին»։

—

ԲԱԳՈՒՑ պ. Ալէքսանդր Աբելեանց խնդրում է մեզ տպել հետեւեալը. «Դիմում եմ այն բոլոր անձինքներին, որոնք զանազան քաղաքներում չնորհ են արել տարածելու իմ թարգմանած գըրքերից «Կլօդ Գէօ» և «Մահապարտի վերջին օրը», և խնդրում եմ անյապաղ վերադարձնել ինձ թէ մնացեալ գրքերը, և թէ փողերը։ Խնդրում եմ ճանապարհածախսը հանել իմ փողերից։ Թող չը նեղանան ինձանից մի քանի պարոններ, որոնց ես ճանաչելու պատիւը չունեմ, բայց որոնց մասին լսել եմ թէ գրականութեան անկեղծ բարեկամներ են, և ինձ ներկայացրել են նրանց իրանց բարեկամները։ Հասցէս. Баку Александру Абелянцъ.

—

Ապրիլ և մայիս ամիսները միակ ամիսներն են, երբ ԹԻՖԼԻՍԻ փողոցներում հնարաւոր է զբօսնել. փողոցները ոչ ցեխոտ են լինում, ոչ էլ թոզոտ, յաճախ գալիս է մեղմ անձրև, որը սակայն ցեխ չէ գոյացնում, բայլ սրանից ամեն տեղ սկսում են ծաղկել՝ակացիաները և լցնում են օդը անուշահոտութեամբ, այնպէս որ Թիֆլիսի սովորական գարշահոտութիւնները այդ ժամանակ չեն զգացվում։

—

Կ. Պոլսից մեզ գրում են. «Մէլքիսէդէկ եպիսկոպոսը իր յարաբերութիւնները լաւացնում է Պատրիարքարանի և առհասարակ պօլսեցիների հետ, որովհետև աչք ունի Սիսի կաթողիկոսական գահի վրա։ Սիսի կաթողիկոսը հիւանդ է, և Մուրադեան եպիսկոպոսը պատրաստվում է նրան յաջորդելու։»

—

Լօնդոնից «Հիւսիսային գործակալութիւնը» ապրիլի 25-ից հեռագրում է հետեւեալը. «Համայնքների ժողովի այսօրվայ նիստում Ֆէրգիւսոնը յայտնեց, որ կառավարութիւնը ոչինչ տեղեկութիւններ չէ ստացել, որոնք հաստատում լինէին թէ քիւրդերի ցեղապետ Մուսայ-բէգը բըռնած և այրած լինէր մի քանի հայերին։ Իսկ հայ աղջկայ մասին եղած հաղորդագրութիւնները, կառավարութիւնը չափազանցրած է համարում։ Ֆէրգիւսոնը աւելացրեց, որ Կ. Պոլսի անգլիական դեսպանը երբէք զանց չէ անում առաջադրութիւններ անելու այդպիսի փաստերի վերաբերմամբ ամեն անդամ, երբ յոյս է ունենում, թէ կարող է օգնել վնասվածներին»։

—

Մեր հաւաքած տեղեկութիւններից երևում է, որ այս տարի Թիֆլիսի թեմում եղած հայոց դպրոցների թիւը 56-ի է հասնում։

—

Ներկայ թվականի «Историческій Вѣстникъ» ռուս ամսագրում տպագրվում է Պարսկաստանի նկարագրութիւնը։ Այդ ամսագրի փետրվարի տետրակի նկարագրութեան մէջ կայ մի տեղեկութիւն այժմեան պարսից նախարար հայազգի Չհանգիր-խանին վերաբերեալ։ Պարսկաստանի այս բարձրաստիճան անձնաւորութիւնը, որ մի քանի տարի առաջ լուսաւորութեան նախարար էր, իսկ այժմ գեղարուեստների նախարար է, այսօր հիւրասիրվում է Թիֆլիսում և պարսից շահի հետ գնում է Եւրոպա ճանապարհորդելու։ Նա գիտնական անձն է համարվում, առաւել ևս պարսից լեզուի և գրականութեան մէջ։ Պատմում են ի միջի այլոց յիշեալ նկարագրութեան մէջ, թէ Պարսկաստանում քարածուխը գտել է նախարար Չհանգիր-խանը. նա պարսից գրականութեամբ պարապելու ժամանակ պատահում է մի հին պարսկական բառի, որը նշանակում է քարածուխ, դրանից նա եզրակացութեան է գալի, թէ այդ լեզուի մէջ չէր կարող այդպիսի մի բառ լինել հին ժամանակներում, եթէ Պարսկաստանում չը լինէր քարածուխի գոյութիւնը։ Այդ պատճառով Չհանգիր-խանը սկսում է հարց ու փորձ անել և երկար ժամանակ ոչինչ տեղեկութիւն չէ ստանում քարածուխի գոյութեան մասին. մի օր իր ճանապարհորդութեան ժամանակ լեռներում պատահում է բոչաներին, որոնք նստած էին խարոյկի չուրջը։ Խանը նկատում է, որ բոչաները այրում են քարածուխ և հարցնում է նրանցից այդ վառելիքի տեղը, բայց բոչաները չեն յայտնում՝ չը նայած զանազան սպառնալիքների։ Այն ժամանակ նախարար Չըհանգիր-խանը հրամայում է տեղական իշխանութեանը հետևել բոչաներին, և այդ միջոցով քարածուխի տեղը գտնվում է։

—

Պետերբուրգի յայտնի պրոֆէսոր քիմիկոս պ. Մէնդէլէեվ, ինչպէս կարդում ենք մայրաքաղաքի լրագիրներում, հրաւիրված է Լօնդոն, որտեղ նա երկու դասախօսութիւն պիտի կարդայ, մինը «Նիւտօնի բնագիտական վարդապետութեան քիմիական դործադրելու մասին» մայիսի 19-ին թագաւորական ինստիտուտում, իսկ միւսը քիմիկոսների ընկերութեան մէջ «Ֆարադէյի աշխատանքների մասին»։ Դրա համար Մէնդէլէեվ կը ստանայ մի մեդալ այդ ուսումնական ընկերութիւնից և 20,000 ֆունտ ստերլինգ վարձատրութիւն։ Ապա Լօնդոնի ուսումնական ընկերութիւնները հանդիսաւոր ճաշկերոյթ կը տան ռուս ուսումնականին, իսկ քիմիկոսների ընկերութեան նախագահ, դոկտոր Բոսսէլ, փառաւոր երեկոյթ կը տայ Մէնդէլէեվին, միջոց տալու անգլիացի ուսումնականներին աւելի մօտ կերպով ռուս ուսումնականի հետ ծանօթանալու համար։

—

Լօնդոնից գրում են, որ Կ. Պոլսի պատրիարքի նուիրակ Դուրեան վարդապետին այնտեղի հայոց կօլօնիան ընդունեց ոչ թէ միայն սառն կերպով, այլ նոյն իսկ կատարեալ ատելութեամբ։ Կասկած չը կայ, աւելացնում է նամակագիրը, որ նոյն տեսակի ընդունելութիւն կը գտնի Դուրեան վարդապետը և Մանչէստրում, ուր նա պէտք է ուղևորվի Լօնդոնից։

—

Երէկ Պարսից շահը ժամանելով Թիֆլիս, այսօր 1—4 ժամը նա պէտք է այցելէ զինուորական դպրոցը։ Երեկոյեան 6 ժամին պէտք է պալատի մէջ ճաշ տրվի, որին ներկայ են լինելու հրաւիրված անձինք։ Երեկոյեան 8½ ժամին քաղաքային թատրոնում պիտի ներկայացում տրվի. Շահի ներկայութեամբ։ Թատրոնում պէտք է խաղայ ֆրանսիական խումբը։ Թատրոնում ներկայ կարող են լինել միմիայն հրաւիրված անձինք։

—

Քաղաքային դուման վճռել է 1,000 ռուբլի ծախսել Պարսից Շահին քաղաքի կողմից արծաթեայ սկուտեղի վրա աղ ու հաց ներկայացնելու և նրա գալստեան առիթով քաղաքը լուսաւորելու համար։

—

ԹԻՖԼԻՍԻ Ղորաչէնի օրիորդական Մարիամեան դպրոցի հոգաբարձուներ ընտրվեցան հետևեալ անձինք՝ Միքայէլ Թամամշեան, Ալէքսանդր Քիշմիշեան, Վ. Զալալեանց (զինուորական) և Ա. Շամշինեան (նկարիչ)։

—

Պարսից շահի ճանապարհորդութեան մասին մեր թղթակիցը Հին-Զուղայից, ապրիլի 28-ից գրում է հետևեալը. «Ինչպէս հաղորդել էի, պարսից շահը դուրս եկաւ Թէհրանից ապրիլի 1-ին։ 23-ին նա հասաւ Թաւրիզ և այսօր ժամանեց Զուղայ։ Բանակը զետեղված է պարսկական սահմանում և վաղը, նորին վեհափառութիւնը 40 աւագանիի հետ անցնելու է ռուսաց հողը, ուր ընդառաջ եկել են զէնէրալ-ադիւտանտ Պոպով, նահանգապետ Շալիկով, և կազակների մի գունդ։ Մեծ շքով պիտի ընդունվի Շահը ռուսաց հողը ոտք կոխելիս. վաղը երեկոյեան մեծ և փառաւոր հացկերոյթ պիտի տրվի։ Այս բոպէիս երբ գրում եմ ձեզ, միշտ անապատ Զուղան մի առանձին կենդանութիւն է ստացել. զինուորական մուզիկան հնչում է, նրան պատասխանում է Արաքսի միւս ափից պարսկական մուզիկան։ Ահագին բազմութիւն եկել խռնվել է մերձակայ քաղաքներից և գիւղերից։ Ամբոխը զուարճանում է. զուռնայ, սազանդար, ըմբշամարտութիւն, ամեն բան կայ։ Շահը դուրս է գալիս Զուղայից կիրակի, 30-ին։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

—

Ֆրանսիական յեղափոխութեան հարիւրամեակի տօնախմբութեան օրը, որը նորերս Ֆրանսիան տօնեց, Ֆրանսիական հոգևորականութեան ներկայացուցիչներից մէկը, Վերսալի եպիսկոպոսը մի ճառ խօսեց, և այն էլ շատ ուղևորված ճառ։

Հէնց այն միջոցին, երբ հանրապետութեան նախագահը ուղևորված կերպով ուզում էր գծագրել յեղափոխութեան պատմութեան անցեալը, և Ֆրանսիական հանրապետութեան ներկան, և հէնց այն միջոցին, երբ հանրապետական նշանաւոր և զառամեալ գործիչ Լէ-Բոյէ բաւական դառն յանդիմանութիւն էր կարդում հանրապետականներին՝ մեղադրելով նրանց թուլութեան մէջ, այդ միջոցին, ասում ենք, առաջ է գալիս հոգևորականութեան ներկայացուցիչը, ցանկանալով որոշել Ֆրանսիական հոգևորականութեան կատարած և կատարելի դերը երկրի և ժողովրդի զարգացման գործում։

Վերսալի եպիսկոպոսը իր ճառում յիշեց այն մասին, թէ 1789 թվականին, սրանից ուրեմն հարիւր տարի առաջ, Ֆրանսիական հոգևորականութիւնը մասնակցել էր ամբողջ Ֆրանսիայի ազնուրութեանը և ձգտումներին՝ բեֆորմների հարցի վերաբերմամբ, և այդ խօսքերը ասելուց յետոյ, նոյն ճառախօսը յարեց, որ այժմեան հոգևորականութիւնը ևս ներշնչված է նոյն զգացմունքով, և իր աղօթքներում և իր սիրոյ մէջ երբէք չէ բաժանում և չէ կամենում բաժանել եկեղեցին Ֆրանսիայից։

Ֆրանսիական և թէ օտար մամուլի շատ օրգանները այն կարծիքն են յայտնում, որ այդ խօսքերի մէջ խառն պէտք է լինի անկասկած Հռոմի պապի հոտը, որ ցանկանում է օգուտ քաղել Ֆրանսիայի ներքին մի քանի վրդովմունքներից, թէ իր անձնական իշխանութիւնը մեծացնելու, և թէ եկեղեցու այժը աւելացնելու նպատակով։

Տեսականապէս կարելի է ընդունել, որ պապը ունենայ այդպիսի ձգտումներ, և աշխատէր իր եպիսկոպոսների ձեռքով գրաւել հասարակաց կարծիքը, բայց թէ ներկայ դէպքում որքան ճիշդ է պապի խառն լինելը Վերսալի եպիսկոպոսի յայտնած մտքերի մէջ,—այդ մասին դրականապէս ոչինչ չէ կարելի ասել։ Սակայն այդ այնքան հետաքրքրական էլ չէ։ Վերսալի եպիսկոպոսի ճառը, առանց պապի մասնակցութեան էլ արտայայտութիւն է ֆրանսիական հոգևորականութեան դիտաւորութիւնների, որը կամենում է ինչպէս և լինի, դեր կատարել, ազդեցութիւն ունենալ, խառն լինել պետական և հասարակական մեծ գործերում։ Ֆրանսիական հոգևորականութիւնը առանց վրդովվելու չէ կարողանում յիշել և տեսնել, թէ ինչպէս իր մեծ և ազդու անցեալից իրան մնացել է մի անշան և կրաւորական ներկայ. նա պարծանքով է յիշում իր զօրեղ անցեալը և սառնասրտութեամբ չէ կարողանում նայել այն անտարբերութեան վրա, որով Ֆրանսիան այժմ վերաբերվում է դէպի հոգևորականութեան և եկեղեցու այժմեան դրութիւնը։

Վերսալի եպիսկոպոսի ճառը, որը արտասանվեցաւ մի այնպիսի նշանաւոր տեղում և մի այնպիսի նշանաւոր առիթով, չունեցաւ էլ մի որ և է ներգործութիւն, նա աղմուկ չը հանեց, մտքերը չը գրգռեց, և հէնց այդ արդէն մի լաւ նշան է, թէ ինչ է վիճակված ֆրանսիական հոգեւորականութեան ապագայում։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Հռոմից հեռագրում են, որ թէ այնտեղ և թէ Իտալիայի գաւառական շատ քաղաքներում արմատական կուսակցութիւնները ֆրանսիական հիւպատոսարանների առջև համակրական ցոյցեր են անում Ֆրանսիային։

—Փարիզից եկած բոլոր տեղեկութիւնները ցուցահանդիսին են վերաբերում։ Ցուցահանդիսի առաջ լռել են քաղաքական բոլոր աղմուկները և ինտրիգները։ Ժողովուրդը զբաղված է ցուցահանդիսով և արտայայտում է մեծ ոգևորութիւն։ Ամեն օր և ամեն ժամ երկաթուղու բազմաթիւ գծերը բերում են դէպի Փարիզ հազարաւոր մարդիկ, որոնք օտար երկիրներից գալով, արդէն զգալի կերպով լցրել են հանրապետութեան մայրաքաղաքը։

—Փարիզից հեռագրում են, որ Էյֆէլեան աշտարակը չինող բանուորները ներկայացան նախագահ Կարնօին, որը ուրախութեամբ ընդունելով նրանց, ստացաւ նրանց ներկայացրած պարգևը՝ Էյֆէլեան աշտարակի մոդէլը։

—Ինչպէս գրում են Վիէննայից, կառավարութիւնը արդէն ներկայացրել է ըէյխսրատին մի օրինագիծ, որով առաջարկում է փոփոխութիւններ մացնել դպրոցական այժմեան կազմակերպութեան մէջ։

—Բէլգրադից գրում են, որ խնամակալութիւնը յայտնել է Նատալիա թագուհուն, որ նա իր Սերբիա գալը պէտք է յետաձգի, քանի որ նրա այժմ այնտեղ դնալը կարող է զանազան տարաձայնութիւնների առիթ տալ։

—Փարիզից հեռագրում են, որ Բոշֆորի որդին, որը անձնասպանութեամբ վերջ տուեց իր կեանքին, ապրիլի 25-ին մեծ հանդիսով թաղվեց։ Արմատական և սոցիալիստական կուսակցութիւններին պատկանողները մեծ բազմութեամբ ուղեկցում էին դագաղը, որի վրա բազմաթիւ պսակներ դրվեցան։ Խօսվեցան ճառեր և թաղման ժամանակ անշան ընդհարում տեղի ունեցաւ ժողովրդի և ոստիկանութեան մէջ։

—Փարիզ եկած օտարների թիւը այն աստիճան մեծ է, որ Ֆրանսիայի մայրաքաղաքում ըսկսում է զգացվել թխած հացի պակասութիւնը։ Բէստորաններից շատերը իրանք սկսեցին այժմ հաց թխել։

—Ֆրանսիական հանրապետութեան նախագահ Կարնօ համաշխարհային ցուցահանդէսը այցելելու ժամանակ ամենամեծ ոգևորութեամբ և անվերջանալի կեցցէներով ընդունվեց ցուցահանդիսի անգլիական և ռուսաց բաժիններում։

—Գերմանական լրագիրները խոստովանվում են, որ Շվեյցարիան իրաւունք ունէր վարվել գերմանական դաղանի ոստիկանութեան ագէնտ Վ.ոլգեմուտի հետ այնպէս, ինչպէս և վարվել է, այն է աքսորել նրան շվեյցարական սահմաններից։

—Պրագայում ձիաքաշ երկաթուղու կառապանները գործադուլ արեցին։

—Հոլլանդիայի թագաւոր Վիլհելմ առողջանալով, պահանջում է որ Լուկսէմբուրգի դքսութեան մէջ հաստատված խնամակալութիւնը ոչնչացվի։ Նասաուեան իշխանը, լրագիրների ասելով, արդէն թողեց Լուկսէմբուրգ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«Արձագանք» շաբաթաթերթի սովորական տաղտուկ բովանդակութեան մէջ մի նորութիւն գըտանք.—Նրա վերջին համարում տպագրված են «Արձագանքի» բաժանորդների անունները։ Ցպագրել բաժանորդների անունները,—նորութիւն չէ ապա ինչ է։ Եթէ շաբաթաթերթի խմբագրութիւնը տպագրելով աղդանունների ցուցակը ենթադրում է թէ դրանով աւելի հետաքրքրական նիւթ է տալիս իր փոքրաթիւ ընթերցողներին, քան թէ «պատմական ուղղութեան» վերաբերեալ բառախաղութիւններով, դուցէ և չէ սխալվում։ Մեզ մնում է միայն շնորհաւորել «Արձագանքի» բաղդաւոր բաժանորդներին. որովհետև եթէ այժմեան «անպատկեր» «Արձագանքը» միայն բաժանորդների անուններն և աղդանուններն է տըպագրում, անկասկած «պատկերազարդ» «Արձագանքը» կը տպագրի իր բաժանորդների պատկերները, նրանց կենսագրութեամբ հանդերձ։ Ահա և ձեզ անսպառելի նիւթի և նկարների աղբիւր հոգեվարք շաբաթաթերթի համար....

* * *

Վերջին ժամանակներս բանւորների համար հնարած են այնպիսի գլխարկներ, որոնց մէջ տեղաւորվում են էլեկտրական կանթեղներ։ Այդ տեսակ գլխարկներ ծածկելով բանւորները կարող են աչխատել գիշեր ժամանակ։

* * *

Նորերս Գերմանիայի կանայք, Լուիզա Օտտո կին-դրողի առաջնորդութեամբ, մի խնդրագիր ներկայացրին գերմանական կառավարութեանը, որով խնդրում են թոյլ տալ կանանց բժշկական և գիտական ասպարէզներում դործել և համալսարաններում բժշկութիւն ուսումնասիրել։ Գերմանուհիների այդ խնդրագիրը իսկապէս մի նոր արտայայտութիւն է այն ընդհանուր ձգտման, որ վաղուց ի վեր կայ կնոջ առաջ գործելու լայն ասպարէզ բանալու համար։

* * *

Ալլսէպին փոքրիկ քաղաքում նորերումս տեղի ունեցաւ հետևեալ դէպքը։ 12 դիմաւորված կանայք գիշերը խարազաններով մտնելով մի ումն Գարիբերդի բնակարանը, արթնացրին նրան, այժմ դուրս բերեցին նրան և սկսեցին ծեծել անխնայ կերպով։ Կանանց այդ խիստ դատաստանի պատճառը այն է եղել, որ այդ պարոնը շատ վատ էր վարվում իր կնոջ հետ և յարաբերութիւններ ունէր մի ուրիշ կնոջ հետ։ Տեղացի կանայք այդ վարմունքը մի վիրաւորանք համարելով իրանց համար, վճռեցին նրան պատժել, ուստի և նրան ենթարկեցին խարազանի հարուածներին։ Բացի դրանից վրդովված կանայք յայտնեցին, որ նոյնը կանեն և յիշեալ պարոնի սիրուհու հետ, եթէ նա շուտով չի հեռանայ քաղաքից։ Կանանց այդ դատավարութիւնը բաւական երկիւղ ազդեց քաղաքի բանւոր-տղամարդկանց....

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ԷՍՍԷՆ, 1 մայիսի։ Էսսէնի հանքագործական շրջանի գրեթէ բոլոր հանքերում աչխատանքները այսօր դադարեցան։ Գործադուլին մասնակցողների թիւը այժմ հասնում է 90,000 հոգու։ Շաբաթ օր Դորտմունդեան ամբողջ լեռնային շրջանում կարգը և հանդստութիւնը ոչ մի տեղ խանգարված չէր։ Սուտ են դրան հակառակ տարածված լուրերը։

ԴՈՐՏՄՈՒՆԴ, 1 մայիսի։ Երէկ երեկոյեան այստեղից դէպի Բերլին ուղևորվեց մի պատդամաւորութիւն գործադուլ արած բանւորների մասնաժողովի կողմից։

ԲԵՐԼԻՆ, 1 մայիսի։ Երէկ պետական կանցլերի պալատում, իրան իշխան Բիսմարկի նախագահութեամբ, պրուսական մինիստրութեան մի նիստ կայացաւ։ Նիստի ժամանակ եկաւ և Վիլհելմ կայսրը և մասնակցեց նիստի երկար խորհրդակցութիւններին, որոնք վերաբերվում էին քարածուխի հանքերի բանւորների գործադուլին։ Բէյխստագում այսօր խօսում էին, որ Բերլին կանչվեցան պատդամաւորութիւններ թէ հանքատերերի և թէ բանւորների կողմից։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 մայիսի։ Երէկ Մեծ Իշխանուհի Մարիա Պավլովնան արտասահմանից Պետերբուրգ վերադարձաւ։ Այսօր կայացաւ Սալտիկովի (Շչեդրինի) թաղման հանդէսը։ Հանդէսում մասնակցում էին գրականութեան ներկայացուցիչները և ուսանող երիտասարդութիւնը։ Դագաղի վրա դրված պսակների թիւը 150-ի է հասնում։ Գերեզմանոցում ճառեր խօսեցին Արսէնիեվ և Օրէստ Միլլէր պուբլիցիստները, և ուրիշներ։

ՀՌՈՄ, 2 մայիսի։ Տարեկան կրեդիտը Աֆրիկայում անվճի ծախսերի համար՝ պակասեցրած է 2,900,000 ֆրանկ գումարի։

ԼՕՆԴՕՆ, 2 մայիսի։ Համայնքների ժողովը ընդունեց առաջին ընթերցանութեամբ՝ գիւղատնտեսական մինիստրութիւն հիմնելու մասին բիլլը և մերժեց թէյի վրա մաքսային տուրքի պահպանելը։ – Մարկիզ Սալսբիւրի հաղորդեց ժողովին, որ թիւրքաց Հայաստանում կատարված բռնութիւնների մասին անգլիական կառավարութիւնը ոչինչ տեղեկութիւն չունի։ Թիւրքաց դեսպանը ենթադրում է, որ բռնութիւնները կարող էին կատարված լինել Պարսկաստանից Հայաստանի սահմաններն անցած թափառական ցեղերը։

ՎԻԷՆՆԱ, 2 մայիսի։ Իշխան Նիկոլայ, թագաժառանգ իշխանի ուղեկցութեամբ, երէկ թողնելով Յէտինիէ քաղաքը, Վիէննայով ուղևորվեց դէպի Պետերբուրգ։

ԼՕՆԴՕՆ, 3 մայիսի։ «Standart» լրագրում տպված է բարոն Ըէյտերին պարսից շահի տուած կոնցէսիայի բնագիրը Պարսկաստանում պետական բանկ հիմնելու համար չորս միլիոն ֆունտ ստերլինգ նոմինալ դրամագլխով։ Նոր պետական բանկին վաթսուն տարվայ ժամանակամիջոցով բացառական իրաւունք է տրվում մշակել Պարսկաստանի երկաթեայ, պղնձեայ, արճիճեայ, ածուխեայ, նաւթեայ և այլ հարստութիւնները։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Մայիսի 2-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արժէ—	93 ր.	25	»
Բերլինի վրա 100 մարկ —	45 »	55	»
Փարիզի վրա 100 ֆրանկ —	36 »	80	»
Ոսկի — արժէ —	7 »	50	»
Մաքսային կուպոններ —	148 »	87	»
Արծաթ — — —	1 »	13	»
Բօրսային դիսկոնտներ —	5 և	$6^1/_4$%	
Պետական. բանկ. 5% տոմս. 1-ին շրջանի	99 »	62	»
— — — — 2-րդ —	99 »	62	»
— — — — 3-րդ —	99 »	62	»
— — — — 4-րդ —	99 »	62	»
— — — — 5-րդ —	99 »	62	»
— — — — 6-րդ —	99 »	62	»
Նոր 4%	85 »	75	»
Արևելեան 5% փոխառութ. 1-ին շրջ.	100 »	50	»
— — 2-րդ —	100 »	75	»
— — 3-րդ —	100 »	37	»
Ներքին 5% առաջին փոխառութ.	271 »	25	»
— երկրորդ —	245 »	25	»
$5^1/_2$% բէնատ	102 »	75	»
Ոսկեայ բէնատ	171 »	—	»
Եօթերորդ կոնսոլիդ. փոխառ.	139 »	—	»
Նոր երկաթուղային բէնատ	100 »	—	»
5% գրաւական թղթեր կալուած.			
փոխ. կրեդ. ընկ. մետ.	137 »	75	»
— — թղթադ.	94 »	62	»
Գրաւ. թղ. Ազնս. բանկի	98 »	25	»
Գիւղական բանկի	102 »	75	»
6% գրաւ. թղ. Թիֆլիսի—27 և 43տ.	— »	—	»
— —Ռութայիսի-18 և 43տ.	— »	—	»
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ	94 »	87	»
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ	94 »	25	»
Օդէսայի — —	96 »	50	»
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ.	— »	—	»

Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնն ամուր է։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԻՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

(Կուկիա, Վ.օրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—10—11 ժ. վիրաբուժական, (և ատամնացաւի), սիֆիլիսի և աչքի ց. բացի կիրակի։
ՐՈՒԴԿՕՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԻՍԱՀԱԿԵԱՆՑ—$11^1/_4$—12 ժ. կանանց և երեխայոց ց.
ԲԵՆԿԼԵՎՍԿԻ—11—12 ժ. ականջի, կոկորդի, քթի ց. և սիֆիլիսի։
ԱՐՏԵՄԻԵՎ—12—1 ժ. երեքչաթթի, ուրբաթ և կիւրակի, կանանց ց.
ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—12—1 ժ. ներքին և երեխայոց ց. բացի կիւրակի։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

ԳԱԴՕՄՍԿԻ—5—$6^1/_2$ ժ. կաչուի ցաւերի և սիֆիլիսի.
ՓՈՒԼԻՆԵԱՆ—$5^1/_2$—$6^1/_2$ ժ. ներքին, երեխայոց և ջղային ց. (էլեկտրոտերապիա)։
ԲԵՆԿԼԵՎՍԿԻ—$6^1/_2$—$7^1/_2$ ժամ.

Հիւանդանոցումն է մանկաբարձուհիք Մողեր և Երևանցեան։
Վճար—50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) համար փոխադարձ համաձայնութեամբ։

Հիւանդանոցի վերատեսուչ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Շուտով տպագրութեան կը յանձնվի

ՍՐԻՆԳԻ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԻ

մի հատորը, որ բաղկացած կը լինի 150—200 երեսից. գիրքը կը տպվի մաքուր և շքեղ թղթի վրա։ Սկզբից սաորագրողների համար գինը 50 կոպէկ է։ Ցանկացողները կարող են դիմել այս հասցէով. Шулаверы (Тиф. губ.) Аршаку Меграбянъ.

1—3

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES

PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

(ՄԵՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ

Ուրբաթ, 12/24 մայիսի ԲԱԹՈՒՄԻՑ դուրս կը գնայ շոգենաւ ALPHEE (ԱԼՖԷ) նաւապետ BAYLUS (ԲԱՅԼԻՍ), մտնելով Կ. Պոլիս, Պօրտ-Լահօս և Լակավալ։

Ագէնտները՝ ԲԱԹՈՒՄՈՒՄ պ. Գ. ԷՍՍԷՆԺԷՐ, իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳԷՈՐԳ ՀԵՋՈՒԲԵԱՆ ՀԵՋՈՒԲԵԱՆՑ։

1—2

ՊՐՕՎԻԶՈՐ Ա. ՇՏԷԽԷՐԻ ՄԻԶՈՑՆԵՐԸ

ԱՏԱՄՆԵՐԻ ՑԱՒԻ ԵՒ ՓՁԱՆԱԼՈՒ ԴԷՄ

ՊՕԴՕԼԵԱՆ ԱՏԱՄՆԱԴԵՂ. ԿԱԹԻԼՆԵՐ 50 ԿՕՊ.
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՕԿԱՑԻՆԵԱՆ ԱՏԱՄՆԱՑԻՆ ԷԼԻԿՍԻՐ 80 ԿՕՊ.
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՏԱՄՆԱՑԻՆ ՓՈՇԻ 30 ԿՕՊ.

ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏ. ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ Կովկասեան դեղաւաճառատան, և պ. պ. Շահպարոնեանցի, Մակկէրի, Սէնչիկօվսկու և Ագմուրովի դեղատներում։ ԲԱԳՈՒԻ մէջ, ԲԷԿԿԷՐԻ մօտ, ՔՈՒԹԱՑԻՍՈՒՄ՝ Կոկոչեվի մօտ, ՍՏԱՎՐՈՊՕԼՈՒՄ, Բրօխնօցկու մօտ և ԵԿԱԵՐԻՆՕԴԱՐՈՒՄ։

Зубныя капли: коп. 50 к. Зубной порошокъ: коп. 30 к. Зубной эликсиръ: фл. 80 к. А. ШТЕХЕРЪ

13—52 (Հ.)

ՈՒՐԲԱԹ ՄԱՅԻՍԻ 5-ԻՆ

քաղաքային տան դահլիճում երեկոյեան ժամը $7^1/_2$-ին լինելու է „ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅԵՐԷՆ ԳՐՔԵՐԻ ՀՐԱՏԱՏԱԿՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ, ուր պիտի քննվի և հաստատվի վարչութեան նախահաշիւը, և ընտրվին վարչութեան ատենադպիրը ու խմբագրական մասնաժողովի երկու անդամ։

2—2

Պատրաստ է տպագրութեան համար

ՍԻԻՄԲԻԻԼԻ

հետևեալ երկու երկը մի գրքում ամփոփած

Ї. ԳԱՂԱՓԱՐԻ ՁՈՀ,

երգախառն դրամա հինգ գործողութեամբ։

ՅԱ. ՕՐԻՈՐԴ ԱԳԱՐՕԴԵԱՆ,

վէպիկ։

Սաորագրողների համար գինը մէկ ռուբլի է. ցանկացողները կարող են դիմել գրքի հրատարակիչ Արշակ Մեհրաբեանին այս հասցէով. Шулаверы Тифл. губ, Аршаку Меграбянъ.

3—3

ГАЗЕТА А. ГАТЦУКА

Иллюстрированная политико-литературная, худож. и ремесленная, еженедѣльная. Въ экстренныхъ случаяхъ выходитъ 2 раза въ недѣлю. Прилагаются парижскія моды и лучшіе переводные повѣсти и романы.

Годъ Пятнадцатый

Подписная цѣна съ пересылкою и доставкою на годъ 5 р.

На полгода 3 р. на $^1/_4$ года 1 р. 60 к. на 1 мѣсяцъ 60 к. За границу на годъ 7 р. на $^1/_2$ года 3 р. 50 к. Безъ пересылки и доставки на годъ 4 руб.

Адресъ редакціи: Москва, Никитскій бульваръ, д. Гатцука.

3—3

Дозволено цензурою, Тифлисъ 3 Мая 1889 г. Типографія Канцеляріи Главноначч. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.